

ՀՀ սփյուռքի նախարարության 2014թ ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորված ծախսերի վերաբերյալ

«ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.

1. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով» (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 05) ծրագրով նախատեսվել է 228472 հազ. դրամ, Կատարվել է վերաբաշխում 3540հազ.դրամի չափով և ճշտված պլանը կազմել է 225022.00 հազ.դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 206952.06 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է 18069.94 հազ.դրամ: Մրցույթներում ներկայացվել են նախատեսվածից ցածր գնային առաջարկներ, այդ իսկ պատճառով գոյացել են չիրացված գումարներ,որոնք վերադարձվել են ՀՀ պետ.բյուջե:Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 147416.45 հազ. դրամ: 2014 թվականի դրամարկղային ծախսը 2013 թվականի համեմատ աճել է 59535.61 հազ. դրամով կամ 40.38 %-ով, որը պայմանավորված է 2014 թվականի պետական բյուջեով ավել հատկացված գումարով:

2. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարների աշխատակազմերի մասով» (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 04) ծրագրով նախատեսվել է 73122.8 հազ. դրամ,վերաբաշխման արդյունքում 3540հազ.դրամով ճշտված պլանը կազմել է 76572.8 հազ.դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 63817.59 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 12755.21 հազ. դրամ: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 44088.03 հազ. դրամ: 2014 թվականի դրամարկղային ծախսը 2013 թվականի համեմատ աճել է 19729.66 հազ. դրամով կամ 44.75%-ով, որը պայմանավորված է 2014 թվականի պետական բյուջեով ավել հատկացված գումարով,ինչպես նաև գնման մրցույթների և առանձին ծախսային հոդվածների գծով ձեռնարկված միջոցառումների արդյունքում առաջացել են տնտեսումներ:

3. « Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» (բաժին 01, խումբ 01, դաս 03, ծրագիր 04) ծրագրով ճշտված պլանը կազմել է 6779.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 6779.8 հազ. դրամ: 2014թվականի ընթացքում համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆԿ-77-Ա, ՆԿ-83-Ա,

ՆԿ-98-Ա, ՆԿ-99-Ա, ՆԿ-100-Ա, հրամանագրերի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 1004-Ա, 1212-Ա, 1235-Ա որոշումների կազմակերպվել է 8 գործուղում: 2013 թվականի փաստացի կատարված 968.30 հազ. դրամ դրամարկղային ծախսի նկատմամբ ավել է կատարվել 5811.5 հազ. դրամով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2013 թվականին իրականացվել է 3 գործուղում:

4. «Մշակութային միջոցառումների իրականացում» (բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր03) ծրագրով նախատեսվել է 305298.6 հազ. դրամ: «Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումներ և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում» ծրագրից 2800.0 հազ. դրամ կատարվել է վերաբաշխում և ուղղվել «Մշակութային միջոցառումներ» ծրագրին, որի արդյունքում ճշտված պլանը կազմել է 308098.6 հազ. դրամ: Ֆինանսավորումը՝ 308098.6 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 319924.3 հազ. դրամ: ՀՀ պետ. բյուջե է վերադարձվել 2105.8 հազ. դրամ: 2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 221298.60 հազ. դրամ: 2014 թվականի դրամարկղային ծախսը 2013 թվականի նկատմամբ աճել է 86800.0 հազ. դրամով, կամ 39.22%-ով, որը պայմանավորված է «Իմ Հայաստան» փառատոնի անցկացմամբ, որը տեղի է ունենում 2 տարին մեկ անգամ:

- **Նպատակներն ու խնդիրները.**

Ծրագրի նպատակն է Հայ մշակույթի պահպանումը և տարածումը սփյուռքում, հայապահպանությունը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են մշակութային գործիչների այցելություններ համայնքներ, աջակցություն համայնքներին, գործուղումներ համայնքներ, մեր մեծերին նվիրված միջոցառումներ, համահայկական խորհրդաժողովների անցկացում, ցեղասպանության 100 ամյա տարելիցին ընդառաջ միջոցառումների կազմակերպում, սփյուռքի ուսուցիչների մրցանակաբաշխություն և այլն, թվով 14 միջոցառում:

- **Ծրագրում ընդգրկվել են**

1. «**Մեր մեծերը**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.00 հազ. դրամ: 38.5 հազ. դրամ վերբաշխվել և ուղղվել «Իմ Հայաստան» փառատոնին: Ճշտված գումարը կազմել է՝ 3961.5 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը՝ 3961.5 հազ. դրամ: Իրականացվել է 5 «Մեր մեծերի» վերաբերյալ գրքույկների տպագրություն, խտասալիկների պատրաստում և «Ազդարար»-ում գնման մրցույթի հայտարարություն: 2013 թվականի ֆինանսավորման ծավալը ևս կազմել է 4000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 3957.0 հազ. դրամ: 43.0 հազ. դրամ վերադարձվել է պետ. բյուջե: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ:

2. «ՀՀ-ում համահայկական խորհրդաժողովների անցկացում» ծրագրի միջոցառման արժեքը 23000.00 հազ.դրամ է: Վերաբաշխվել է «Աշխատանք սփյուռքի համայնքներում» ծրագրից 1720.0 հազ.դրամ և «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին» ծրագրից 1400.0 հազ.դրամ: Վերաբաշխման արդյունքում ծրագրի արժեքը կազմել է 26120.0 հազ.դրամ: Ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման և դրամարկղային ծախսը կազմել է 26120.0 հազ. դրամ: Միջոցառման նպատակն է ՀՀ-ում կազմակերպել և անցկացնել համահայկական խորհրդաժողովներ: Այս տարի իրականացվել է «Հայաստան-Սփյուռք 5-րդ համահայկական համաժողովը»: Ժամանել է 1089 մասնակից, որից 748 մասնակից՝ արտասահմանյան տարբեր երկրներից և 341-ը՝ ԼՂՀ-ից և ՀՀ-ից: 2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 20106.9 հազ. դրամ՝ 6013.1 հազ.դրամ ավել քան 2013 թվականին, որը պայմանավորված է մասնակիցների քանակով: Ծրագիրն իրականացվել է՝ 100%-ով:

3. «Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 9000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 8612.0 հազ.դրամ: Տարբերությունը՝ 388.0 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետ. բյուջե: 2014 թվականի իրականացվել է՝

- «Հայոց զոհերի հիշատակին նվիրված կոթողներ» պատկերագիրքը - 560 հատ
- Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի ներկայացուցիչների համաժողովների կազմակերպում-միջոցառում
- 3 հատ ավիատոմսի ձեռք բերում Մոսկվա-Վիեննա-Հանովեր
- Ցեղասպանության վերաբերյալ գրքի հրատարակում
- Ազդարարում գնման մրցույթի հայտարարում:

2013 թվականին ծրագրի համար նախատեսված է եղել 8000.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է՝ 7930.0 հազ.դրամ, 70 հազ. դրամ վերադարձվել է պետ.բյուջե: 2014 թվականին ֆինանսավորվել է 1000.0 հազ.դրամ ավել, քան 2013 թվականին, որը պայմանավորված է 2015 թվականին Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ Ցեղասպանությանը նվիրված գրքերի տպագրությամբ, գիտաժողովների և կլոր սեղանների անցկացմամբ, ինչպես նաև հիշատակի միջոցառումների կազմակերպմամբ:

4. «Համահայկական մրցանակաբաշխություն» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 8000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 8000.00 հազ.դրամ, որը կիրականացվի 2015 թվականին: Նպատակը սփյուռքում կատարվող աշխատանքների խրախուսման,

մրցակցության մեջ ի հայտ եկած նվաճումների, ամենօրյա շնորհակալական աշխատանքի գնահատման, հայապահպանություն իրականացնելու գործում մեծ ավանդ ունենալու համար՝ խրախուսվում են սփյուռքի հայազգի մանկավարժները, մշակութային ոլորտի ուսուցիչները և այլ հայապահպանություն իրականացնող անձիք: 2013 թվականի ֆինանսավորման և դրամարկղային ծախսը կազմել է 7000 հազ. դրամ: 2014 թվականին 1000.0 հազ.դրամ, կամ 14.28%, ավել է ֆինանսավորվել,որը պայմանավորված է Ռուսաստանի միության «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» շարադրությունների մրցույթին առաջին տարին միանալու հանգամանքով: 2013 թվականին պարգևատրվել է 139 մրցանակակիր,իսկ 2014թվականին 90 մրցանակակիր:

5. «Աջակցություն համայնքների կայացմանը» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1000 հազ. դրամ: «Իմ Հայաստան» փառատոնին վերաբաշխվել է 27.60 հազ. դրամ: Ճշտված գումարը կազմել է՝ 372.40 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 972.40 հազ դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է հայկական խորհրդանիշերի պատրաստում /ՀՀ դրոշ, զինանշան, այբուբեն, հայրենասիրական երգերի սկավառակ, ՀՀ Նախագահի նկարը/ և տրամադրում սփյուռքյան կառույցներին և կազմակերպություններին: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերվել «ՀՀ օրհներգ» - 17 հատ, «ՀՀ դրոշ» - 17հատ, «Հայկական այբուբենի տառերը» - 17 հատ, «ՀՀ զինանշան» - 17հատ «ՀՀ սահմանադրություն» - 17 հատ, «Փաթեթավորման արկղ» - 17 հատ: 2013 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 11739.0 հազ. դրամ: 10766.6 հազ. դրամ պակաս,քան 2013 թվականին, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ սփյուռքյան կառույցներին և կենտրոններին մինչև 2013 թվականը առաքվել է պահանջված քանակությունը: Ծրագիրն իրականացվել է 100%-ով:

6. «Աշխատանաք սփյուռքի համայնքների հետ» ծրագրի իրականացման գումարը կազմել է 23000.00 հազ. դրամ: Վերաբաշխվել է «Իմ Հայաստան» փառատոնին՝ 2225.56 հազ.դրամ,«Սփյուռք» ամառային դպրոցին՝ 4600.40հազ. դրամ «ՀՀ-ում համահայկական համաժողովների անցկացում»՝ 1720 հազ. դրամ:Ճշտված գումարը կազմել է՝ 16174.04 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 14168.3 հազ. դրամ: 285.7 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետ. բյուջե: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է՝

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի այցը՝ Լիսաբոն (Պորտուգալիայի Հանրապետության) 07-08-ը՝ Բարսելոնա (Իսպանիայի Թագավորություն)

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի այցը՝ Բրյուսել (Բելգիայի Հանրապետության),
- ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի Ամերիկայի հայ համայնքների վարչության Հյուսիսային Ամերիկայի հայ համայնքների հետ կապերի բաժնի պետ՝ Լիլիթ Հարությունյանի գործուղումը Բրյուսել (Բելգիայի Հանրապետության),
- ՀՀ սփյուռքի նախարարի օգնական Արուսյակ Ներսեսյանի գործուղումը՝ Փարիզ,
- «Մարգարիտներ» ազգագրական համույթի 12 անդամների Դիարբեքիր (Թուրքիա)
- «Զանգակ» համույթի 12 անդամների՝ Թբիլիսի (Վրաստանի Հանրապետություն)
- ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի Եվրոպայի հայ համայնքների վարչության պետ Հրաչյա Ասլանյանը՝ Մոնակոյի Թագավորություն, Մարսել /Ֆրանսիայի Հանրապետություն/
- ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ԱՊՀ հայ համայնքների վարչության բաժնի պետ Տ.Շագոյանը՝ Վրաստանի Հանրապետություն:
- Հայաստանի Երգի պետական թատրոնի 5 անդամներ՝ Աթենք,
- «Կոմիտաս-Հավերժի ճամփորդը»-/5 անձ/ համույթի այցը Աման (Հորդանան) և Երուսաղեմ 2013-2014թ ծրագիր:

2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 21714.2 հազ.դրամ: 7545.9 հազ.դրամ ավել կամ 34.33%, քան 2014 թվականին, որը պայմանավորված է գործուղումների աշխարհագրությունից:

7. «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 16000.00 հազ. դրամ: Վերաբաշխվել է «ՀՀ-ում համահայկական համաժողովների անցկացում»՝ միջոցառմանը 1400.00 հազ. դրամ: Ճշգրտված գումարը՝ 14600.հազ. դրամ: Դրամարկղային ծախսը՝ 14007.3 հազ. դրամ, տարբերությունը՝ 592.7 հազ. դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է մշակութային գործիչների այցելություններ տարածաշրջան և Հայաստանյան մշակութային միջոցառումներին տարածաշրջանի արվեստագետների մասնակցության ապահովման ծառայությունների ձեռք բերում: Ծրագիրն իրականացնելու նպատակով նույն չափի գումար է տրամադրվել նաև 2013թվականին: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 15614.5 հազ.դրամ 1607.20 հազ. դրամ ավելի քան 2014 թվականին: Ծրագիրն իրականացել է 95.9%-ով:

8. «**Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ Հայաստանում կամ սփյուռքում**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 10000.00 հազ. դրամ: «Իմ Հայաստան» փառատոնին վերաբաշխվել է՝ 60.0 հազ. դրամ: Ճշգրտված գումարը՝ 9940.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 9940 հազ. դրամ: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել և իրականացվել է Սփյուռքի հայ համայնքների տարածաշրջանային հավաքների կազմակերպում Հայաստանում ծառայությունների ձեռք բերում, Ազդարարում գնման մրցույթի հայտարարություն: Ծրագիրն իրականացնելու նպատակով նույն չափի գումար է տրամադրվել նաև նաև 2013թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 9688.6 հազ. դրամ: 251.40 հազ. դրամ ավել քան 2013 թվականին, որը պայմանավորված է մասնակիցների թվով:

9. «**Աջակցություն Մերձավոր սփյուռքի համայնքներին (Վրաստան)**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 22000.00 հազ. դրամ, «Իմ Հայաստան» փառատոնին վերաբաշխվել է 54.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը՝ 21946 հազ. դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են՝

- Աջակցություն «Վերնատուն» ՀԿ-ին
- Աջակցություն Վրաստանի հայ համայնքին «Կամուրջ»-ին
- Հայաստանյազ Առաքելական սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Է. Միրզախանյանին,
- Աջակցություն Վրաստանի Արևիկ մանկապատանեկան թերթին,
- Աջակցություն Վրաստանի «Արշալույս» հայալեզու թերթին,
- Աջակցության Սամցխվե-Ջավախքին,
- Նյութատեխնիկական աջակցություն Վրաստանի հայ համայնքին,
- Մրցույթի հրավերի տպագրություն:

2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 21826.9 հազ.դրամ՝ 119.1 հազ.դրամ պակաս, կամ 0.5%, քան 2014 թվականին, որը պայմանավորված է ցածր գնային առաջարկությամբ: Ծրագիրը շարունակական է և ապագայում ևս իրականացվելու են նմանատիպ միջոցառումներ:

10.«**Սփյուռքահայերի ինտեգրման ծրագիր**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 11000.00 հազ. դրամ, «Իմ Հայաստան» փառատոնին վերաբաշխվել է՝ 100.00հազ.դրամ: Ճշտված գումարը կազմել է՝ 10900.0 հազ. դրամ: Դրամարկղայինը՝ ծախսը կազմել է 10900 հազ.դրամ: Միջոցառման շրջանակներում իրականացվել է համերգների,

բեմադրությունների, հավաք հանդիպումների իրականացում տեխնիկական միջոցների վարձակալությամբ: Ազդարարում գնման մրցույթի հայտարարություն: 2013 թվականի միջոցառման արժեքը 10000.0 հազ.դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 9721.5 հազ. դրամ՝ 1178.5 հազ. դրամ ավել, քան 2013 թվականին: Գումարի ավելացումը պայմանավորված է սիրիահայերի և ուկրաինահայեր արտագաղթով դեպի Հայաստան: Ծրագիրն իրականացվել է 100%-ով:

11. «Հայկական սփյուռքի գիտական կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 4000.00 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը՝ 3970.6 հազ. դրամ: Ծրագրի նպատակն է համակարգի համալրումն ու սպասարկումը: Ծրագրի շրջանակներում վճարվել է աշխատավարձ մասնագետներին՝ 3511.3 հազ. դրամ, ինտերնետային կայքի անխափան աշխատանքի, սպասարկման, հանգուցային անվան գրանցման, մրցույթի հրավերի տպագրության ծառայությունների ձեռք բերման համար: 2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 3854.2 հազ. դրամ: 116.4 հազ. դրամ կամ 3.02% ավել, քան 2013 թվականին, քանի որ ներկայացվել է ցածր գնային առաջարկ:

12. «ԱՊՀ հայ համայնքների կրթամշակութային զարգացում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 26000.00 հազ. դրամ: «Իմ Հայաստան» փառատոնին վերաբաշխվել է 486.8 հազ. դրամ: Ճշտված գումարը կազմել է՝ 25513.2 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը՝ 24703.2 հազ. դրամ, իսկ 810.0 հազ. դրամ ետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում համաձայն ՀՀ կառավարության 22.09.2011 թվականի նիստի թիվ 37 արձանագրային որոշմամբ իրականացվել են ԱՊՀ հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակություն: Իրականացվել է՝

- Աջակցություն Դոնի Ռոստովի Հայագգ մշակութա-լուսավորչական հիմնադրամի գործունեությանը
- Տարածաշրջանային ինքնագործ խմբերի քարոզչական և հեռուստահաղորդումների կազմակերպում -1միջոցառում
- Հայոց լեզվի դասագիրք-350օրինակ
- Հանրագիտակ-այբենարան-350օրինակ
- Գործուղում Ալմաթի-Աստանա-Ակտաու տարածաշրջան-2անձ
- Մշակութային գործիչների և ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի վարչության պետի գուծուղումներ ԱՊՀ հայ համայնք

- Գործուղում Երևան համոյթի 5անդամ Կոմիի Հանրապետություն
- Գնման մրցույթի հայտարարություն Ազդարարում

2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 24298.7հազ.դրամ,որը պակաս է 404.5 հազ.դրամով կամ 1.66%-ով, քան 2014 թվականին՝պայմանավորված ներկայացված գնային առաջարկով:Միջոցառումն իրականացվել է 96.8%-ով:

13. «Սփյուռքյան կառույցների և նշանավոր անհատների ծրագրերի իրականացում Հայաստանում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 24298.6 հազ. դրամ «Իմ Հայաստան» փառատոնին վերաբաշխվել է 443.6հազ.դրամ: Ճշտված գումարը կազմել է՝ 23855.0 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսը կազմել է՝ 23855 հազ.դրամ: Ծրագրի նպատակն է իրականացնել սփյուռքահայ նշանավոր արտիստների ծրագրեր՝ 4 աջակցություն: Այս տարի իրականացվել է՝

- Աջակցություն «Վերածնունդ» միջազգային մրցույթ փառատոն հասարակական կազմակերպության գործունեությանը,
- Սփյուռքահայ «Մեծերի» և/կամ Սփյուռքահայ կառույցների մեծարման միջոցառումների կազմակերպում
- Հայաստանում սփյուռքյան հայկական կազմակերպությունների հետ միջոցառումների կազմակերպման ծառայություններ
- Սփյուռքի նշանավոր անհատների միջոցառման կազմակերպման ծառայություններ
- Ավիատոմսի ձեռք բերում-1մասնակից
- Սփյուռքյան կառույցների և նշանավոր անհատների միջոցառման կազմակերպման ծառայություններ
- Գնման մրցույթի հայտարարություն Ազդարարում

2013 թվականին միջոցառման արժեքը կազմել է 18298.6 հազ. դրամ 6000.0հազ.դրամ պակաս քան 2014 թվականին: Դրամարկղային ծախսը կազմել է 17455.5 հազ.դրամ՝ 11538.20 հազ. դրամ պակաս քան 2014 թվականին, որը պայմանավորված է սփյուռքի նախարարության հանդեպ սփյուռքյան կառույցների վստահության բարձրացմամբ սփյուռքի նախարարության հետ համատեղ ծրագրերի իրականացմամբ:

14. «Սփյուռք ամառային դպրոցի կազմակերպում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 40000.00 հազ. դրամ: «Աշխատանք սփյուռքի համայնքների» հետ միջոցառումից վերաբաշխվել է 4600.4

հազ. դրամ: Ճշտված գումարը կազմել է՝ 44600.4 հազ. դրամ դրամարկղային ծախսը կազմել է 44600.4 հազ. դրամ, իսկ 2013 թվականին միջոցառման արժեքը նույնպես եղել է 40000.00 հազ. դրամ դրամարկղային ծախսը կազմել է 40000.0 հազ. դրամ: Ծրագրի նպատակն է իրականացնել 5 ուղղությամբ ամառային ուսուցողական դասնթացների կազմակերպում: Իրականացվել է «Ամառային դպրոցի» ուսուցիչների վերապատրաստում, հայոց լեզվի, պարուսույցների, երգի, երիտասարդ առաջնորդների, սփյուռքի լրագրողների դասնթացի կազմակերպում:

15. «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպում ծրագրի իրականացման համար նախատեսված գումարը 84000.0 հազ. դրամ է «Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում» ծրագրից իրականացվել է 2800.0 հազ. դրամ վերաբաշխում: Ճշտված գումարը կազմել է 90236.10 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 90236.1 հազ. դրամ: Իրականացվել է՝ կեցության, սննդի, տրանսպորտային ծառայությունների ձեռք բերում ԼՂՀ-ում և Հայաստանի այլ վայրերում, ապահովվել է թվով 1700 ներկայացուցիչների մասնակցությունը միջոցառմանը: Վճարվել է աշխատավարձ աշխատակիցներին, վարձակալվել է ավտոմեքենա, ձեռք է բերվել վառելիանյութ և գնման մրցույթի հայտարարություն Ազդարարում:

5.«Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացում» (բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր 13) ծրագրով նախատեսվել է 20000.0 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 20000.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 20000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 19672.6 հազ. դրամ: ՀՀ պետ բյուջ է վերադարձվել 327.4 հազ. դրամ, որը ծրագրի իրականացման ընթացքում առաջացած տնտեսումն է: 2013 թվականին ծրագրով նախատեսվել է 38606.30 հազ. դրամ դրամարկղային ծախսը կազմել է 37992.20 հազ. դրամ: 2014 թվականի ծրագիրը ֆինանսավորվել է 18606.30 հազ. դրամ պակաս քան 2013 թվականին, որը պայմանավորված է ծրագրային գումարի ավելացմամբ, որն էլ պայմանավորված է ծավալների մեծացմամբ: «Կոմիտաս Վարդապետի» փառատոնին մասնակցել է 120 մարդ արտերկրից, իրականացվել է փառատոնի բովանդակությամբ գրքի տպագրություն-420 հատ, վարձակալվել են դահլիճներ և հյուրանոցային սենյակներ: 2012 թվականին իրականացվել է նույնպես 2 փառատոն: 2013 թվականին մասնակիցների քանակը ավելի մեծ է եղել, քան 2012 թվականին:

• Նպատակներն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում է մի շարք

հայապահպանական խնդիրներ: Մասնավորապես իրականացվում են համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

6. «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» (բաժին 08, խումբ 03, դաս 02, ծրագիր 12) ծրագրով նախատեսվել է 33036.40 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է՝ 32655.0 հազ. դրամ: ՀՀ պետ բյուջե է վերադարձվել 350.3 հազ. դրամ: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 29983.20 հազ. դրամ, 2014 թվականի դրամարկղային ծախսը 2013 թվականի համեմատ աճել է 2671.8 հազ. դրամով կամ 8.91%-ով, որը պայմանավորված է կայքը սպասարկելու և ավելի դինամիկ դարձնելու հանգամանքով ներգրավված լրացուցիչ աշխատակցով:

Ծրագրերը իրականացվել են ամբողջությամբ և ընդգրկված են եղել հետևյալ միջոցառումները.

1. «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակում,
2. «Էլեկտրոնային գրադարանի ստեղծում»,
3. «Արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը փոխարկիչ» ծրագրի համալրում և սպասարկում:

7. «Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրում և առաքում սփյուռքի համայնքներին» (բաժին 08, խումբ 03, դաս 02, ծրագիր 13) ծրագրի վերաբերյալ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 10000.00 հազ. դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը, դրամարկղային ծախսը կազմել է 10000.00 հազ. դրամ: 2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 10000.00 հազ. դրամ:

- **Նպատակները.**

Ծրագրի նպատակն է ուսումնական, ուսումնամեթոդական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի և ՀՀ խորհրդանիշերի, սփյուռքի հայ համայնքներին և հայկական դպրոցներին առաքում:

- **Խնդիրները.**

Սփյուռքի հայկական կրթօջախներում այսօր կա ուսումնական և հանրամատչելի գրականության պակաս:

2013 թվականին ծրագրի շրջանակներում մոտ 100 ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների առաքվել է 42000 կտորից ավել գրականություն, իսկ 2014 թվականի 41258 կտոր գրականություն: Դա պայմանավորված է որոշ նյութերի փոքր քաշ ունենալու հանգամանքով (օրինակ աշխատանքային տետրեր, որոնք պահաջված նյութերի մեջ մեծ քանակ են կազմել): Որպես ՀՀ

շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող փոստային ծառայություններ մատուցող կազմակերպություն՝ առաքման կազմակերպման նպատակով, պայմանագիր է կնքվել «ԱՅՓՈՍ» ՓԲԸ-հետ 10000.00 հազար դրամ գումարի, որն ամբողջությամբ իրականացվել է:

8. «Սփյուռքի երիտասարդների Հայաստան պարբերական այցելություններ «ԱՐԻ ՏՈՒՆ» (բաժին 08, խումբ 04, դաս 01, ծրագիր 03) ծրագրի վերաբերյալ

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 85000.00 հազ.դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 84368.7 հազ. դրամ: 2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 83777.9 հազ. դրամ: 2014 թվականին դրամարկղային ծախսը 590.8 հազ. դրամ, կամ 0.7% ավել, քան 2013 թվականին, որը պայմանավորված է մասնակիցների ավելացմամբ: 2013 թվականի 1250 մասնակցի դիմաց 2014թվականին մասնակցել են 1300 երիտասարդներ:

• Նպատակները.

Ծրագրի նպատակն է սփյուռքում բնակվող 13-20 տարեկան հայազգի երիտասարդների համար կազմակերպել և իրականացնել 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում 4-օր ճամբարում: Մասնակցում են թվով 9 ճանաչողական շրջայցերի /Սևան, Էջմիածին, Նորավանք, Խոր Վիրապ և այլն/ ինչպես նաև ճամբարում մասնակցում են հայոց լեզվի, հայկական երգի և պարի դասերին:Գլխավոր նպատակներից է նաև սփյուռքում բնակվող հայազգի երիտասարդների հայապահպանությունը և ոգին:

• Խնդիրները.

Ծրագրի իրականացման արդյունքում լուծվում են մի շարք խնդիրներ: Երիտասարդներին ծանոթացնել հայկական մշակույթին, հայ ընտանիքին, ինչպես նաև ծրագրի մասնակիցներին ավելի մոտեցնել հայրենիքին:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են՝

Մասնակիցներին պարագաների տրամադրում, տպագրական աշխատանքներ, մասնակիցներին դիմավորում և ճանապարհում, շրջայցեր, սննդի սպասարկում, ծաղիկների գնում և առաքում, դահլիճների վարձակալություն, տեսանկարահանում և լուսանկարահանում, փակման հանդիսավոր արարողություն, կեցություն ճամբարում, համակարգող փորձագետներին աշխատավարձի տրամադրում:

9. «Հայաստան–Սփյուռք գործակցություն թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում» (բաժին 08, խումբ 03, դաս 01, ծրագիր 09) ծրագրի վերաբերյալ

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 52600.00 հազ.դրամ, 2800.00 հազ. դրամ վերաբաշվել է և ուղղվել է «Մշակութային միջոցառումներ» ծրագրին: Ճշտված պլանը՝ 49800 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 49800 հազ.դրամ: 2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 52600.0 հազ. դրամ: Ծրագիրը կատարվել է ամբողջությամբ:

• Նպատակները.

Ծրագրի նպատակն է պահպանել և զարգացնել կապերը հայրենիք-սփյուռք, սփյուռք-սփյուռք և սփյուռքում ավելի հասանելի դարձնել սփյուռքի նախարարության գործունեությունը, ավելի մանրամասն ներկայացնել իրականացվող ծրագրերն ու դրանց նպատակները, ինչպես նաև համայնքներում տարածել Հայաստանն ու հայկական մշակույթը քարոզող հաղորդումներ և հոլովակներ:

• Խնդիրները.

Ծրագրի իրականացման արդյունքում հայկական հեռուստատեսությամբ և հայկական համայնքներում կցուցադրվեն հայապահպանություն քարոզող և Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող հեռուստահաղորդումներ, հոլովակներ և ֆիլմեր:

• Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- «Սփյուռքի ժամ հեռուստահաղորդաշար» - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 10000.00 հազ. դրամ/48 հեռուստահաղորդում/:
- «Մերոնք» - հեռուստանախագծի ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 14500.00 հազ. դրամ /72 հաղորդում/:
- «Հայ Սփյուռք» - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.00 հազ. դրամ /10 հաղորդում/:
- «Արմնյուզ» - հեռուստահաղորդման պատրաստման համար ֆինանսավորման ծավալը կազմել է 6000.00 հազ. դրամ /20 հաղորդում/:
- «Այլադավան Հայեր» - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 2000.00 հազ. դրամ /4 հաղորդաշար/

- «Զավախք», «Դեպի Արցախ» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է - 2000.0 հազ. դրամ /4հաղորդաշար/
- «Հայոց լեզվի տառաճանաչություն» ֆինանսավորման ծավալը կազմել է 6000.0 հազ. դրամ /հեռուստահաղորդաշար/
- Աջակցություն «Գոլոս» ՍՊԸ-ին ֆինանսավորման ծավալը կազմել է 1500.0 հազ. դրամ
- Հայ առաքելական, Հայ կաթողիկե և Հայ ավետարանչական եկեղեցիների մասին պատմող փաստավավերագրական ֆիլմ - ֆինանսավորման ծավալը կազմել է 1500.0 հազ. դրամ
- «Համայնքային կառույցներ» հեռուստահաղորդաշար - ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.0 հազ. դրամ
- «Վիրտուալ սփյուռք» անվանումով համահայկական տեղեկատվական համակարգի նախագծում, փորձարկում և գործարկում ֆինանսավորման ծավալը կազմել է 800.0 հազ. դրամ
- ՀՀ սփյուռքի նախարարության 6-ամյակի մասին ֆիլմի պատրաստում- 300.0 հազ. դրամ

10. «Գիտական և գիտատեխնիկական հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» (բաժին 01, խումբ 04, դաս 01, ծրագիր 02) ծրագրի շրջանակներում պետական աջակցություն

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով հաստատվել է 14400.0 հազ. դրամ, որից ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 14400.0 հազ. դրամ: 2013 թվականի նախատեսվել է՝ 10800.0 հազ. դրամ: 2013 թվականին 3600.0 հազ. դրամ պակաս է քան 2014 թվական պայմանավորված հետազոտությունների քանակով: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ:

• Նպատակներն ու խնդիրները

Ծրագրի իրականացման նպատակն է Պետական պատվերի միջոցով, մասնագիտացված կազմակերպությունների կողմից իրականացնել սփյուռքին վերաբերվող 12 թեմաների գիտական հետազոտությունների պատվեր:

2014 թվականին ծրագրի շրջանակներում պատվիրվել են թվով 12 գիտական հետազոտություններ հետևյալ կազմակերպություններին.

1. «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ - ին «Արևելահայերենի և Արևմտահայերենի տերմինաբանական զուգադիր քննություն» գիտական ծրագրի իրականացման

- համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
2. «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ - ին, «Գրական սփյուռք 2014» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
3. «Նորավանք» գիտական հիմնադրամին, «Սփյուռքի աշխարհաքաղաքական ընկալումները», «Հայագիտական կենտրոնները Սփյուռքում, ներուժի գնահատում» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 2400.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
4. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին, «Հայկական կտակների իրավական դաշտի ուսումնասիրություն» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
5. «ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ին, «Համընդհանուր ցանցային լեզվի օգտագործմամբ հայերենի բառապաշարային տվյալների հենքի մշակում» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
6. «ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին, «Հայերը սեփական և այլազգի միջավայրում. խնդիրներ, հետազոտության փորձ և հեռանկարներ» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
7. «ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին «Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն (Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան, Ս.Պետերբուրգ, Մոսկվա)» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
8. Երևանի պետական մանկավարժական համալսարան «Սփյուռք» կենտրոն «Սփյուռքահայ գրականության նվաճումները 1920-1960-ական թթ.) և զարգացման միտումները» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված

Ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

9. «Վերադարձ Հայաստան» հիմնադրամ «Հայրենադարձության միտումների ուսումնասիրություն» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

10. Սոնա Հարությունյան(Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի հայագիտության ամբիոնի դասախոս,բ.գ.դ.) «Հայոց Յեղասպանության թեման իտալական գրականության մեջ» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

11.Բեյրութի Հայկազյան համալսարանի հայկական Սփյուռքի ուսումնասիրման կենտրոն «Լիբանանահայ համայնքի պատմություն» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

12. «Սփյուռք տարեգրքի պարբերականի հրատարակում» (Բաժին 08, Խումբ 03, Դաս 02, Ծրագիր 14) ծրագրի վերաբերյալ

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով հաստատվել է 8200.00 հազ.դրամ: Ֆինանսավորումը,դրամարկղային ծախսը կազմել է 7893.6հազ.դրամ: 2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 5709.0 հազ.դրամ: 2014 թվականին 2184.6 հազ.դրամով ավել է , քան 2013 թվականին, որը պայմանավորված է այն ներկայացված գնային առաջարկով:

13. «Հայրենիք Սփյուռք գործակցության ծրագրերի իրականացում» ծրագրի վերաբերյալ Բաժին 08, Խումբ 02, Դաս 04, Ծրագիր 04

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեյով հաստատվել է 34455.6 հազ. դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 34455.6 հազ. դրամ: 2013 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 32572 հազ. դրամ: 2013 թվականի և 2014 թվականի դրամարկղային ծախսի տարբերությունը նվազագույն աշխատավարձի և էլ. էներգիայի բարձրացման արդյունքն է: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ:

14. «Պետական հիմնարկների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրի վերաբերյալ Բաժին 10, Խումբ 09, Դաս 02, Ծրագիր 03

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեյով հաստատվել է 14520.00 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 11546.52 հազ. դրամ: 2014 թվականի դրամարկղային ծախսը բյուջեով հաստատված պլանի նկատմամբ պակաս է իրականացվել 2973.48 հազ. դրամով՝ պայմանավորված սոցիալական փաթեթից օգտվելու իրավունք ունեցող ավելի փոքր թվով շահառուների քանակով: 2013 թվականին բյուջեյով հաստատվել է 14520 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11297.0 հազ. դրամ՝ 249.52 հազ. դրամով պակաս, քան 2014 թվականի, որը պայմանավորված է շահառու հանդիսացող աշխատողների թվաքանակի ավելացմամբ:

15. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ

2014 թվականին հատկացվել է 183340 դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 183340 հազ. դրամ: 2013 թվականին պահուստային ֆոնդից հատկացվել՝ 76166.0 հազ. դրամ

2014 թվականի ընթացքում համաձայն ՀՀ կառավարության 24.07.2014 թվականի թիվ 818-Ն որոշմամբ «Նվիրաբերություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով 127000.0 հազ. դրամ գումար է հատկացրել «Հայաստանի ազգային սկաուտական շարժում» հասարակական կազմակերպությանը Բյուրականի բնակավայրի շինարարական աշխատանքներն իրականացնելու համար:

Համաձայն ՀՀ կառավարության 27.11.2014 թվականի թիվ 1364-Ն որոշմամբ «Նվիրաբերություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով 26160.0 հազ. դրամ գումար է հատկացվել «Սիրիահայ հիմնախնդիրները համակարգող» հասարակական կազմակերպությանը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների սիրիահայ ուսանողներին 2014/2015 ուսումնական տարվա կրթաթոշակ հատկացնելու նպատակով:

Համաձայն ՀՀ կառավարության 18.12.2014 թվականի թիվ 1423-Ն որոշմամբ 2014 թվականի սեպտեմբերի 19-21-ը Երևանում կայացած «Հայաստան-Սփյուռք» 5-րդ համաժողովին մասնակցած օտարերկրյա քաղաքացիների մուտքի արտոնագրի տրամադրման համար նախատեսված պետական տուրքի վճարումից ազատելու արդյունքում չգանձված պետական տուրքի գումարը վճարողների փոխարեն ՀՀ պետական բյուջե վճարելու նպատակով ՀՀ սփյուռքի նախարարությանը «Պարտադիր վճարներ» հոդվածով հատկացվել է 180.0 հազ. դրամ: Այն փոխանցվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հաշվեհամարին:

Համաձայն ՀՀ կառավարության 17.12.2014 թվականի թիվ 13901-ՆԳ որոշմամբ «Շենքեր և շինություններ ձեռք բերում» հողվածով հասկացվել է 30000.0 հազ. դրամ Վրաստանի Բաթումի քաղաքում հայկական համայնքային կենտրոն ստեղծելու նպատակով անշարժ գույք ձեռք բերելու համար:

16. Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում

ՀՀ պետական բյուջեով հաստատվել է 80000.00 հազ. դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 79414.32 հազ. դրամ: 2013 թվականին այս ծրագիրը չի իրականացվել:

- Ծրագրի նպատակն է՝

ա) աջակցել սփյուռքահայության լեզվամշակութային ուժացման դեմ պայքարին, հայեցի կրթության ու դաստիարակության, հայ ինքնության ճանաչմանը, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, Սփյուռքի հայապահպանության ծրագրերի իրականացմանը,

բ) նպաստել համայնքներում կրթական ծրագրերի իրականացմանը, աջակցել կրթօջախներում ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու որակի բարելավմանը:

17. Զավախքի դպրոցներին գույքի տրամադրում

ՀՀ պետական բյուջեով հաստատվել է 30000.00 հազ.դրամ: Համաձայն ՀՀ կառավարության 17.12.2014 թվականի թիվ 13901-ՆԳ որոշմամբ կատարվել է վերաբաշխում և գումարը ուղղվել է պահուստային ֆոնդ: